ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> սեպտեմբերի 2011թ. N: 290-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱԽՈՒՐՅԱՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկի Շիրակի մարզպետարանի ենթակայության դպրոցներ բաժնի 97-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 3-ի ուղերձը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2011 թվականի հունիսի 23-ի որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել Հովհաննես Դավթյանի անվամբ:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է